ՏԱԹԵՎԻԿ ՄԵՐՋԱՆՅԱՆ
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՎԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ» ԵՎ «ՍԱՔՈՒԼՆ ՈՒԽՏ ԳՆԱՑ» ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ: Նար-Դոս, «Ինչպես բժշկեցին», «Սաքուլն ուխտ գնաց», Շոպենհաուեր, Ֆրոյդ, կյանքի և մահվան հարաբերակցություն, երազ, իրականություն, արտաշխարհ, ներաշխարհ:

Ключевые слова и выражения: Нар-Дос, “Как лечили”, “Паломничество Сакула”, Шопенгауэр, Фрейд, соотношение жизни и смерти, сон, реальность, внешний мир, внутренний мир.

Key words and expressions: Nar-Dos, “How They Cured”, “Saqul Passes to the Covenant”, Schopenhauer, Freud, correlation of life and death, dream, reality, outer world, intrinsic world.

Նար-Դոսն այն եզակի գրողներից է, որի ստեղծագործությունը սոցիալ-պատմական կյանքի փոփոխությունների պայմաններում շարունակում է պահպանել ինչպես իր արդիական նշանակությունը, այնպես էլ կենսական հարցադրումները: Գեղագետ-հոգեբանն իր յուրօրինակ դիտողականությամբ, կյանքի և մահվան հոգեբանական ընկալումներով ու վերջիններիս գեղարվեստական դրսևորումներով կանգնած է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ հանրային-քաղաքական կյանքում տեղի ունեցող բեկումնային փոփոխությունների կենտրոնում: Այս առումով ակադ. Ա. Տերտերյանը իրավացիորեն նկատում է. *«Նա դիտում է կյանքը, իր խուզարկու, սրատես աչքերով: Բայց բավական չէ դեռ դիտելը: Նա անտարբեր չէ դեպի կյանքի անցուդարձը»*[1]:

Հայ գրականագիտությունը բազմիցս է խոսել «Մեր թաղը» ընդհանուր խորագիրը կրող նորավիպաշարի գաղափարագեղարվեստական և ճանաչողական արժեհամակարգի մասին, սակայն գրեթե չի անդրադարձել առաջադրված խնդրին: Վերջինս, սակայն, բավական ուշագրավ է, որովհետև կյանքի ու մահվան հարաբերակցության հիմնախնդրի շուրջ

[1] **Տերտերյան Ա.,** Երկեր, Երևան, Համալսարանի հրատ., 1980, էջ 109:

արձակագիրը փոքր ծավալի ստեղծագործության մեջ դիտարկում է տեսակի մեջ եզակի դրսևորումների կերպեր:

Հոգեկերտվածքների ամփոփ գեղարվեստականացմամբ Նար-Դոսն իր ծննդավայրի ընդհանուր համայնապատկերից առանձնացնում է անհեռանկար ու օտարված մարդկանց մի տեսակ, որը սոցիալական կյանքի դժնդակ պայմանների և տարիների ընթացքում ձևավորվող թույլ բնավորության հետևանքով դուրս է ընկել կյանքի բնականոն զարգացման ուղեծրից ու անվերջ խարխափում է սնոտիապաշտության և անգիտության շրջապտույտում: *«...Սոցիալական ու հոգեբանական նկարագրի շատ եզրեր հաստատում են նրա անկումայնությունն ու անհեռանկարայնությունը»*[2],- նկատում է պրոֆ. Վ. Սաֆարյանը:

«Ինչպես բժշկեցին» նորավեպի առաջին իսկ պարբերության մեջ զգացվում է հեղինակի վարպետությունը: Հայ գրողներից քչերին է հաջողվել արտաքին, տվյալ դեպքում՝ թաղի նկարագրությունից գնալ դեպի մարդկային ներաշխարհ և ցույց տալ այնտեղ կատարվող հոգեկերտվածքային փոփոխությունները: Համեմատությունների հարցում Նար-Դոսն արևելահայ նորավիպագրության մեջ եզակիորեն մնում է անկրկնելի. նրա բոլոր նկարագրությունները հիմնված են դիպուկ համեմատությունների վրա. *«Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ փողոցներ, որոնք նեղլիկ անցքերով գնում խաչաձևում են իրար, կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես»*[3]:

Նար-Դոսի ռեալիզմի հասարակական ներգործուն ուժն ու ազդեցությունը պայմանավորված են ներքնախավերի բազմակողմանի և ընդգրկուն դրսևորումներով: Արագ զարգացող դարաշրջանում հեղինակը փորձում է տեսնել՝ հին ու նոր կացութաձևերի բախումների հիմքի վրա և կյանքի ու մահվան հարաբերակցության տիրույթում ինչպես են ձևավորվում մարդկային հոգեկերտվածքն ու բարոյականությունը: Նար-Դոսի՝ խնդրո առարկա, ինչպես նաև մյուս նորավեպի գաղափարական ենթաշերտերում բացառիկ քննության են ենթարկվում մարդագիտության հիմնադրույթները: Արվեստագետին, ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ Գ. Հովհաննիսյանը, առանձնապես հետաքրքրում էր, թե

---

[2] **Սաֆարյան Վ.,** Գրողի և կերպարի անհատականությունը, Երևան, Մակմիլան-Արմենիա հրատ., 2001, էջ 190:

[3] **Նար-Դոս**, Երկերի ժողովածու 5 հատորով, Հատոր 1, Երևան, Հայաստան հրատ., 1968, էջ 25:

սոցիալական, հասարակական այդ փոփոխություններն ինչ անդրադարձում են գտնում մարդու ներաշխարհում[4]:

Ժամանակաշրջանի անվերջ փոփոխությունը և դրա հետևանքով անդառնալիորեն կործանվող գեղեցկությունների ողբերգությունը գրականության մեծագույն մտահոգություններն են: Հինը կործանվում է, բայց նորը հուսալի ոչինչ չի բերում իր հետ և անխնա ոտնահարում է մարդկային անհատականությունը: Ամեն «նորի» ներմուծմամբ անցյալի «զամբյուղ» է նետվում մարդկային մի գեղեցկություն: *«Նար-Դոսի հերոսների ցավն ու թախիծը չի սահմանափակվում փոքրիկ դժբախտությունների շրջանակում, այն վերաճում է մարդու հոգևոր բնական աշխարհի կորստյան իսկական ողբերգության»*[5], - գրում է Գ. Հովհաննիսյանը:

Կյանքի թշվառությանը վաղուց արդեն համակերպված և ճակատագրի անխնա հարվածներին մի կերպ դիմագրավող խեղճությամբ է բնութագրվում ջուլհակ Թորոսն իր հինավուրց տնակով. *«Նրա խրճիթը մյուս տնակներից տարբերվում էր նրանով, որ սրա պատերի կեսն ալիզից էր (կավի և հարդի շաղախից) և կտրանը երդիկ ուներ, որի գլուխը ծածկված էր կոտրած կարասի վերին մասով»*[6]: Այս պատկերով գրողը կատարում է եզակի դիտարկում: Երբեմնի ջուլհակի կյանքը, «կարասի» նման կոտրվելով, դարձել է հոգսաշատ ու անհեռանկար առօրյա: Հոգսը ծնվում է մարդու հետ, այսինքն՝ դրված է հոգսի և պարտականության տարբերության խնդիրը: Ապրելու հոգսը թևաթափ է արել ծերունուն: Մի կողմից դրված է ապրելու անկարողությունը, որովհետև կյանքն իր կացութաձևով այդ հնարավորությունը չի տալիս, իսկ մյուսից՝ հնամենի ավանդույթներով սրբագործված ապրելու պարտադրանքը, որը նաև պարտականության նման մի բանի է վերածվել Թորոսի և իր աղջկա՝ Մարթայի համար: Մարթայի կերպարին հատուկ է սնոտիապաշտ և բարդույթավորված հոգեբանությունը: Այս դիտանկյունից թերևս անհամոզիչ է Գ. Հովհաննիսյանի առաջադրած հետևյալ տեսակետը. *«Մարթայի աստվածավախությունը ծնվում է լավը, բարին ու գեղեցիկը պաշտպանելու ձգտումից»*[7]:

Նար-Դոսը գեղագիտական նրբին միջոցներով և եղանակներով ցույց է տալիս, որ մարդը (անկախ սեռային պատկանելիությունից) իր դատողություններով, կամային հատկանիշների դրսևորումներով, ինչպես նաև ճակատագիրը կերտելու առանձնահատուկ վերաբերմունքով

---

[4] Տե՛ս **Հովհաննիսյան Գ.,** Նար-Դոս, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 13:

[5] Նույն տեղում, էջ 15:

[6] **Նար-Դոս**, Երկերի ժողովածու, նշվ. հրատ., էջ 25:

[7] **Հովհաննիսյան Գ.,** Նար-Դոս, նշվ. հրատ., էջ 18:

սեփական կյանքը դատապարտում է մահվան. *«... չէր ամուսնացել (**Մարթան** .- ընդգծումը մերն է – Տ. Մ.) միայն նրա համար, որ ծերունի հայրն անտեր-անտիրական չմնա»*[8]:

Մարդկային կյանքի գրավականը ինքնաշարունակությունն է: Բավականին վիճահարույց և հակասական այս տեսակետի մեջ ճշմարտության չափաբաժինը, անտարակույս, գերազանցելի և անհերքելի է:

Կյանքի և մահվան նարդոսյան ընկալումները խնդրո առարկա նորավեպերի համապատկերում ըստ էության բխում են գերմանացի փիլիսոփա Արթուր Շոպենհաուերի ոչ բանական (իռացիոնալ), հոռետեսական այն դատողություններից ու հայացքներից, որոնք վերաբերում են մարդու էությանը, անհատական կեցությանը և աշխարհում զբաղեցրած տեղին ու դերին: Համաձայն այս փիլիսոփայության՝ իմացության և ճանաչողության, մարդու գոյաբանության և աշխարհայացքի ձևավորման ընթացքում որոշիչ և խթանիչ է ոչ թե բանականությունը այլ անգիտակցականությունը, այլ խոսքով՝ իռացիոնալը: Հիշյալ գործընթացներում առաջնային տեղ ունեն կամքը, բնազդները, ներըմբռնումը (ինտուիցիա), զգացմունքները, կրքերը և կույր հավատը: Շոպենհաուերի համոզմամբ՝ մարդն իր բնույթով ոչ թե բանական, այլ անբանական էակ է. *«Աշխարհն իմ պատկերացումն է»*[9],-եզրակացնում է փիլիսոփան:

Եթե ռացիոնալիստական փիլիսոփայությունը զարգանում էր մտածողության և բանականության միջոցով, ապա շոպենհաուերյան ամբողջ փիլիսոփայությունը միտված էր դեպի անգիտակցական ուժերն ու ցանկությունները, ինչպես նաև ներաշխարհային որոնումները: Այս դիտանկյունից Նար-Դոսը նկատում է, որ առօրյա կյանքի կարիքներից ու հոգսերից թևաթափ եղած անհատը հայացքը հառում է ոչ թե իրականության, այլ ներաշխարհային որոնումների, մտացածին պատկերների վերլուծությունների և վերջիններիս ընկալումների վրա. *«Տարօրինակ աղջիկ էր Մարթան: Ծիծաղ, ուրախ տրամադրություն ասած բանը կարծես բնավ ծանոթ չէր նրան. ծանրաբարո, սակավախոս, միշտ զգաստ, միշտ լուրջ, միշտ կենտրոնացած իր ներքին աշխարհի մեջ, ուր կարծես շարունակ պրպտում էր ինչ-որ ու չէր գտնում»*[10]:

---

[8] **Նար-Դոս**, Երկերի ժողովածու, նշվ. հրատ., էջ 26:

[9] **Шопенгауер А.** Мир как воля и преставление, Классическая философская мысль, Минск, Современный литератр, 1999, стр. 78:

[10] **Նար-Դոս**, Երկերի ժողովածու, նշվ. հրատ., էջ 26-27:

Սնոտիապաշտությունը Մարթայի համար ստեղծել է անկանոն երևակայություն, որի արդյունքում օրիորդը շրջապատում կատարվող ամեն ինչ հիվանդագին է ընկալում ու ընդունում. *«Մատաղացու մոգին… ս. Գևորգի մոգին... քանի վախտա մզզում ա... բա մեղքը չի՞… բա թողանք, որ շներն ու կատվանիքը զզզզեն»*[11]:

Հոգեկերտվածքի նմանատիպ դրսևորումը, նարդոսյան ընկալումների համաձայն, պայմանավորված է ոչ միայն ստացած դաստիարակությամբ, այլև միջավայրի ազդեցությունների դաշտով. *«Դեռևս մոր կենդանության ժամանակ, որ զարմանալի աստվածավախ կին էր, տարված ամեն տեսակ նախապաշարումներով, նա (**Մարթան.**- ընդգծումը մերն է – Տ. Մ.) սովորել էր հավատալ սրբերին, որոնք այժմ մի-մի պաշտամունքի առարկա էին դարձել նրա համար»*[12]:

Այս բոլորը գուցե սարսափելի չթվային, եթե շրջապատող միջավայրը չլիներ այդքան չար ու դաժան, անողոք ու շահամոլ: Ինչպես վերևում արդեն նշել ենք, Նար-Դոսի համար կարևոր տեղ ուներ ինչպես ժամանակաշրջանը, այնպես էլ դրանում ապրող մարդն իր բոլոր դրսևորումներով: Այս դիտանկյունից համոզիչ է հեղինակի ստեղծած ագահ մարդկանց ընդհանուր պատկերը, մասնավորապես գրբաց Գրիգորի իրապաշտական հոգեկերտվածքը: Իրապաշտության դիրքերից գրողը տեսնում է, որ մարդը ձեռք է բերել ուրիշի դժբախտության վրա գումար վաստակելու անփառունակ և մերժելի մի նկարագիր: Ճիշտ է, սկզբում չեմուչում է անում, փողը քիչ համարում, սակայն ակնկալվող գումարի գայթակղությանը չդիմանալով՝ հանձն է առնում «բժշկել» Մարթային:

Այս նորավեպի դիպաշարային լարված ընթացքի մեջ ուշարժան է երեխայի առկայությունը: Սա մի առանձնահատուկ հնարք է, որը բոլորովին այլ արտահայտությամբ նկատելի է նաև մյուս՝ «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպում: «Խելագարված» աղջկան բժշկելու ժամանակ գրբաց Գրիգորի պահանջով Թորոսենց խրճիթ է գալիս թաղի երեխաներից մեկը: Երեխայի առկայությամբ Նար-Դոսը հմուտ հոգեվերլուծաբանի ընկալմամբ մատնանշում է կյանքի փրկության և շարունակության միակ ճշմարիտ ճանապարհը, որն ըստ էության Մարթային վիճակված չէր:

Հիվանդին գիտակցված տգիտությամբ «բժշկելու» ամբողջ ընթացքը նորավեպի ողբերգական առանցքն է: Միայն «թաբախ ման ածող Ցականի» ներկայությունից է, որ խառնամբոխն իրար անցած փորձում է ազատել «կալուկապ» եղած Մարթային: Ճիշտ է, ժամանակը բուժում է աղջկա

[11] Նույն տեղում, էջ 31:
[12] Նույն տեղում, էջ 27:

«մաթրախի խարանները», սակայն ամիսներ անց նա մահանում է «նույն խելագար դրության մեջ»:

Սարսափելին այն է, որ Մարթայի մահով ոչինչ չի փոխվում խավարամիտ և հնամենի սովորություններով ապրող մարդկանց միջավայրում: Նրանք շարունակում են հավատալ սուրբ աղոթքների քողի տակ թաքնված գրպանահատությանը. *«Իսկ գրբաց Գրիգորը մինչև օրս էլ շարունակում է իր արհեստը՝ առաջվա պես ժպտուն աչքերով և կարմիր այտերով»*[13]:

Հիրավի, ժամանակակից կյանքի, այս դեպքի և առհասարակ նարդոսյան ժամանակաշրջանի զուգահեռներում տեսնում ենք, որ մարդու ընկալման տիրույթները շատ չեն փոխվել, եթե չասենք՝ մնացել են նույնը: Մերօրյա կյանքում քիչ չեն գրբաց գրիգորները՝ էքստրասենսներ կամ պայծառատեսներ հորջորջումով, որոնք մարդկային հուզաշխարհի ամենանուրբ լարերի շահագործմամբ ու չարչրկմամբ փորձում են ինքնահաստատվել և հիմնավորել իրենց վերերկրային ուժերը:

Հին ավանդույթների աղավաղման և խաթարման կենտրոնում է հայտնվել նաև Նար-Դոսի «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպի համանուն հերոսը: Հեղինակին հետաքրքրում էր շատ կարևոր մի հարց՝ մարդու հոգեկերտվածքը որքանո՞վ կարող է դիմակայել հասարակության պարտադրած սնոտիապաշտ հարաբերություններին, որոնք իրենց ճանապարհին ավերում են ամեն ինչ: Նորավիպագիրը համապարփակ հետազոտող է. ճիշտ է, թեև նրան հատուկ չէ Երուխանի դիտողունակությունը, վերլուծելու զոհրապյան կարողությունը, իրողությունը հասարակական ընդհանուր պատկերից կիսելու բաշալյանական ունակությունը, բայց և այնպես, անկախ սոցիումից, մարդկային հոգեբանության մեջ տեղի ունեցող պայքարի և այդ պայքարում հոգեկերտվածքի պարտության կամ հաղթանակի արտացոլման հարցում նա մնում է եզակի, անկրկնելի և ուղղորդող հեղինակ:

Գրականության մեջ աշխատանքը միշտ ներկայացվել է որպես հավերժական տառապանք, մի բան, որը խաթարում ու ոչնչացնում է անհատի էությունը: Այս խնդիրն է դրված Երուխանի նորավեպերի հիմքում: Հեղինակը ոչ թե մերժում է աշխատանքը, այլ գեղագետի իր դիտողականությամբ տեսնում է, որ աշխատանքն ունի նյութի հայթայթման աղբյուրներ: Մարդն աշխատում է, իսկ նյութը մեծ մասամբ իրենը այդպես էլ չի դառնում, ուստի այս դեպքում աշխատանքն ընկալվում է որպես տառապանք: Խնդրո առարկա նորավեպում աշխատանքի բերած տառապանքը

[13] Նույն տեղում, էջ 47:

չնչին է թվում կենցաղային աննշան դժվարությանը դիմակայելու համեմատ: Այս իմաստով համոզիչ է Վ. Սաֆարյանի այն պնդումը, ըստ որի՝ աշխատանքի մարդը անզոր է դիմագրավելու ամենասովորական կենցաղային չարիքին անգամ[14]:

Աշխատանքի նկատմամբ բոլորովի տարբեր ելակետեր ունեն արևելահայ և արևմտահայ նորավիպագիրները: Հատկանշական է նաև, որ Լ. Բաշալյանն իր երկու՝ բացարձակ տարբեր նորավեպերում («Խաչախաճին» և «Սյուզենիի վարպետ») հիմնավորում է՝ մարդն իր բնույթով հակված է հաղթահարել կյանքի պարտադրած ցանկացած արգելանք: Բաշալյանն ընդգծում է մարդկային անկոտրում բնավորության ընդլայնված մի շառավիղ, ըստ որի՝ պայքարի մեջ գտնվող և դժվարություններից չընկճվողները դեռ պարտված չեն: Խոսքը ոչ թե մեծ հաջողությունների և ձեռքբերումների, այլ դիմացկունության և կամային որակների ձևավորման, զարգացման և դրսևորումների մասին է:

Հասարակական և եկեղեցական հաստատությունների բացասական վերաբերմունքի հետևանքով Սաքուլը հայտնվել է միայնության մեջ, որտեղ իշխում է միայն սնահավատ անգիտությունը: Ընդհանրապես երազներն ուղղորդող հատկություն ունեն: Կյանքում լինում են դեպքեր, երբ աննշան երազն անգամ մարդու համար մի ամբողջ աշխարհ է: Սա ավելի ընդգծված նշանակություն ունի կարիքից քայքայված մարդկանց համար: Սաքուլի կնոջ՝ Նատոյի տեսած երազը դառնում է ուղղորդող նշաձող՝ ստեղծված անել դրությունից դուրս գալու համար. *«Սաքուլ ջան, ասում եմ, ազին որ գա, բացանողի մոտ ղրկենք: Ես ի՞նչ գիտամ, բալի էլի խաչիցն ես, ու անմեղ տեղը քեզ պտի փչացնես դեղերով»*[15]:

Նար-Դոսը երազների մասին խոսում է Զիգմունդ Ֆրոյդից շուրջ մեկ տասնամյակ առաջ[16]: Գիտականորեն չտիրապետելով հոգեվերլուծությանը՝ նա իր գրողական ներքնատեսությամբ կարողանում է հստակորեն պատկերացնել և գեղարվեստականացնել երազի և իրականության ուղիղ կապը:

Թշվառ միջավայրում ապրող, բայց նրանից օտարված դուրգար Սաքուլի սովորական հիվանդությունն իր համար դառնում է ճակատագրական: Ակներև է ճակատագրի նկատմամբ ունեցած նարդոսյան

---

[14] Տե՛ս **Սաֆարյան Վ.**, նշվ. աշխ., էջ 192:

[15] **Նար-Դոս,** Երկերի ժողովածու, նշվ. հրատ., էջ 51:

[16] Զիգմունդ Ֆրոյդի «Երազների մեկնաբանություն» մենագրությունը հրատարակվել է 1899թ., սակայն թվագրվել 1900թ., քանի որ հեղինակը և հրատարակիչը ցանկանում էին այն «վերագրել նոր դարին»:

մոտեցումը. գրողը հավատարիմ է մնում խղճի և խեղճության արանքում հայտնված իր հերոսի հոգեկերտվածքի և միջավայրի նկարագրությանը: Նա գտնում է, որ մարդն իր ճակատագիրն անկախ իր կամքից է կերտում. «-*Է՜հ, արեք, ինչ ուզում եք,- ասաց նա խորին անտարբերությամբ»*[17]:

«Բացանողի» խորհրդով Սուրբ Գևորգ հասած ուխտավորների սպասելիքները մնում են անկատար: Սաքուլին չի օգնում «խաչի» զորությունը. երկու օր ու գիշեր հորդառատ անձրևը ավելի է քայքայում Սաքուլի՝ առանց այն էլ հյուծված առողջությունը. *«Հազում էր չոր ու թույլ, որի ժամանակ ձայնը կարծես հորից էր դուրս գալիս»*[18]:

Մարդկանց խեղճության և միամտության վրա սկսում են ինքահաստատվել մի փոքր բարձրում կանգնածները, այս դեպքում՝ Սերգեյ Ստեփանիչը: Վերջինս, իհարկե, գրբաց Գրիգոր չէ: Ի տարբերություն նախորդ նորավեպի՝ այստեղ այդքան էլ բացասական գծերով չի ժխտվում ժամանակի հարուստ և ուրիշներին օգնել ցանկացող մարդկանց տեսակը: Նար-Դոսին հետաքրքրում էր այն հարցը՝ որքանով են հասարակական հարաբերությունները խեղաթյուրում մարդկային հոգեբանությունը: Նորա-վիպագիրն այստեղ ևս եզակի դրսևորումներ է ցուցաբերում. ըստ նրա՝ հասարակական հարաբերությունները կարող են խեղաթյուրել մարդու հոգեբանությունը, բայց ոչ ամբողջությամբ: Որպես կանոն, հանրային հարաբերություններն ունեն իրենց պարտադրանքը, իսկ մարդը հասարակությունից դուրս ապրել չի կարող: Մարդը հասարակության մեջ ապրում է նրա ստեղծած նորմերով: Հետևաբար պարտադրանքների այս տիրույթում մարդկային հոգեկերտվածքը չի կարող դրսևորվել, քանի որ դրա ժամանակն ու հնարավորությունը չունի, և մարդը մնում է անճանաչելի. *«Ասում եմ, փոթրաղչիկ Սերգոն,- շշնջում է մեռնողը, ամեն մի խոսքի վրա հազիվ շունչը ետ բերելով,-էն, որ իրեք թուման եմ պարտ… փիս մարդ չի… կըլի, որ չուզի…»*[19]:

Հասարակական հարաբերությունների մեջ առկա է պարտադրանքի խորհուրդ, որից մարդը չի կարող շեղվել երկու պատճառով. նախ՝ վախից, որովհետև կպատժվի, իսկ երկրորդը՝ պարտքի գիտակցումից: Այս վերջինը ենթադրում է, որ մարդը, տվյալ դեպքում՝ մահվան սպասելիքների մեջ տվայտվող դուրգար Սաքուլը գիտակցում է՝ իր առջև դրված պարտքը ինքը

[17] **Նար-Դոս,** Երկերի ժողովածու, նշվ. հրատ., էջ 51:
[18] Նույն տեղում, էջ 64:
[19] Նույն տեղում, էջ 66:

պիտի փոխհատուցի. «*Համա թե ուզի… յարաղս տվեք… Թե հերիք չանի… քամարս ծախեցեք… հոգիս չծանրացնեք»*[20]:

Կյանքը շարունակվում է իր բնականոն հունով: Այս ամբողջ ողբերգական համանվագի մեջ Նար-Դոսը չի մոռանում սկզբում թթավաճառի, ապա Սաքուլի հնգամյա աղջկա միջոցով հնչեցնել և նոտագրել կյանքի շարունակության ազդակները. *«Թութա՛ թութա՛, ախառի՛ թութա»*[21]:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Նար-Դոսը մարդու հոգեբանության մեջ կատարվող անտեսանելի, բայց բեկումնային փոփոխությունների ամփոփ գեղարվեստականացմամբ բոլոր ժամանակներում շարունակում է մնալ արդիական հեղինակ: Գեղագետ-հոգեբանը նկատում է, որ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հին ու նոր կացութաձևերի փոխատեղման տիրույթում մարդու հոգեբանության մեջ տեղի են ունենում զարմանալի երևույթներ: Այս երկու նորավեպերի զուգահեռ դիտարկումները մեկ ընդհանուր հատկանիշի՝ սնահավատության ուղեծրով, ակնհայտ են դարձնում, որ մարդու հոգեբանության փոխհարաբերության քննությունն այս հեղինակի գրչի տակ ձեռք է բերում գիտական որոշակի ոճ: Եթե Մարթայի պարագայում մարդու միտքը պտտվում է ներաշխարհի տիրույթներում, ապա Սաքուլի դեպքում ամեն ինչ դիտարկվում է արտաշխարհի հետ հարաբերակցության ոլորտներում: Կյանքի և մահվան հարաբերակցության կերպերը տարբեր կողմերից են դիտարկվում «Ինչպես բժշկեցին» և «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպերում: Իսկ ինչ վերաբերում է Նար-Դոս-Երուխան-Բաշալյան զուգահեռներին, ապա այստեղ ի հայտ են գալիս արևելահայ և արևմտահայ գրողների ընկալումներն ու մոտեցումները աշխատանքի, դիմացկունության և կամային որակների ձևավորման նկատմամբ: Նար-Դոսի ընկալումների համաձայն՝ հին կացութաձևը, այնուամենայնիվ, իր կնիքը թողնում է մարդու և նրա հուզաշխարհի ձևավորման և զարգացման վրա:

Տ. Մերջանյան

Կյանքի ու մահվան ընկալումները Նար-Դոսի «Ինչպես բժշկեցին» և «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպերում

Ամփոփում

Բնավ չստվերելով նարդոսագիտության անցած բեղմնավոր ուղին՝ ներկա հրապարակման մեջ շոպենհաուերյան փիլիսոփայության

[20] Նույն տեղում, էջ 66:

[21] Նույն տեղում, էջ 65:

համապատկերում շեշտադրվել են կյանքի և մահվան նարդոսյան ընկալումների առանձնահատկությունները: Առաջադրված հիմնահարցը, որը երբեմն վրիպում է գրականագիտության տեսադաշտից, բավական ուշարժան է և արդիական: Անցումային դարաշրջանում Նար-Դոսը հին ու նոր կացութաձևերի, ինչպես նաև ներաշխարհի և արտաշխարհի բախումների հիմքի վրա ցույց է տալիս ձևավորվող մարդկային հուզաշխարհն ու բարոյականությունը: Հոգեբան գրողի գրչի տակ գիտական ոճավորում ստացած մարդագիտության հիմնադրույթները տեսակարար կշռի են բարձրացնում արևելահայ նորավիպագրությունը:

Т. Мерджанян

Понимание жизни и смерти в новеллах Нар-Доса
“Как лечили” и “Паломничество Сакула”

Резюме

В статье, отнюдь не умаляя достижений нардосоведения, выделяются особенности народосовского восприятия жизни и смерти в свете философии Шопенгауэра. Исследуемая проблема, порой выпадавшая из поля зрения литературоведов, достаточно актуальна и заслуживает внимания. Нар-Дос раскрывает эмоциональный мир человека, его нравственность, формирующиеся в переходную эпоху, в столкновениях между старым и новым укладом жизни, между внешним миром и внутренним миром героя. Основные положения человековедения, приобретая под пером писателя-психолога научную стилизацию, повышают художественный уровень восточноармянской новеллистики.

T. Merjanyan

The Perceptions of Life and Death in Nar-Dos’s Short Novels
“How They Cured” and “Saqul Passes to the Covenant”

Summary

The present publication emphasizes the peculiarities of Nar-Dos’s perception of life and death in the context of Schopenhauer’s philosophy without at all casting a shadow on the productive works on Nar-Dos’s creative life of the past. The presented issue that is sometimes omissed in the field of literary criticism is rather noteworthy and contemporary. In the transitional era, Nar-Dos shows the emerging human emotional world and morality on the basis of old and new lifestyles, as well as on wide clashes of intrinsic and outer world. Under the pen of the psychologist writer the scientific styling of anthropological issues get specific weight and heighten the easternarmenian novel literature.